# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

**<<ՀՔ-ՀՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/7>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի**

**ք. Հարենցավան** **_06_ _հուլիսի_ _2016թ._**

**ժամը _14[00]_**

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ **Հ. Պետրոսյանը**

Հանձնաժողովի անդամներ՝ **Ն. Թորոսյանը, Ա. Սիմոնյանը**

Հանձնաժողովի քարտուղար՝ **Գ. Գաբրիելյանը**

**1. Տեղեկատվություն հայտ ներկայացրած մասնակցի մասին**
**(Հ. Պետրոսյան)**

1.1 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտ է ներկայացրել <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագիր կնքած հետևյալ մասնակիցը.

| Հ/հ | Մասնակցի | |
|---|---|---|
| | Անվանումը | Գտնվելու վայրը (հասցեն) |
| 1 | <<Էկոմիքս>> ՍՊԸ | ք. Երևան, Ա. Բաբաջանյան 60/2 |

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

**2. Տեղեկատվություն հայտ պարունակող ծրարների կազմման և ներկայացման համապատասխանության մասին**
**(Հ. Պետրոսյան)**

2.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտ պարունակող ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

**3. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին**
**(Հ. Պետրոսյան)**

3.1 <<Էկոմիքս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

- Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ մատակարարելու վերաբերյալ հայտարարությունում (Հավելված N 4.2) նշված չէ N 4, 5, 6, 26 չափաբաժինները, մինչդեռ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու դիմումում (Հավելված N 1) նշված է, որ N 4, 5, 6 չափաբաժիններով ներկայացված ապրանքները հանդիսանում են ՌԴ արտադրության ապրանք, իսկ N 26 չափաբաժնով ներկայացված ապրանքը՝ ՀՀ արտադրության ապրանք:
- Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ մատակարարելու վերաբերյալ հայտարարության (Հավելված N 4.2) մեջ ավելացնել <<Ընդ որում ընտրված մասնակից ճանաչվելու և պայմանագիր կնքվելու դեպքում ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման ժամանակ Պատվիրատուին պետք է ներկայացվի նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը>> պարբերությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

**4. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին (Հ. Պետրոսյան)**

4.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> թիվ 168-Ն որոշման 45-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց.

ա) Մեկ աշխատանքային օրով կասեցնել սույն նիստը և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 08.07.2016թ.-ի ժամը 14$^{00}$-ն շտկել արձանագրված անհապատասխանությունները հրավերով սահմանված ձևով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

**Հանձնաժողովի նախագահ՝** _____ **Հ. Պետրոսյան**
*(ստորագրությունը)*

**Հանձնաժողովի անդամներ՝** _____ **Ն. Թորոսյան**
*(ստորագրությունը)*

_____ **Ա. Սիմոնյան**
*(ստորագրությունը)*

**Հանձնաժողովի քարտուղար՝** _____ **Գ. Գաբրիելյան**
*(ստորագրությունը)*